ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 22-րդ կետի, «Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներովՀայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման եվ վարման կարգը սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի դրույթներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2006 թվականի նոյեմբերի 14-ի «Համայնքի ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի գտնվելու համարակալման, հասցեավորման մասին» թիվ 3 որոշման մեջ «Ախուրյան, Գյումրու խճուղի 5-րդ փողոց» բառերը փոխարինել «Աշոտ Շահբազյան փողոց՝ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում զոհված,Ախուրյան համայնքի բնակիչ Աշոտ Շահբազյանի անունով» բառերով:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ընդունելուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել աշխարհագրական անվանումների ռեգիստր վարող պետական լիազորված մարմին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար
3. Սույն որոշմամբ կատարված փողոցի անվանափոխման վերաբերյալ տեղեկություններ տրամադրել ՀՀ կադաստրի կոմիտեին, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնին, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Ախուրյանի անձնագրային բաժանմունքին և Ախուրյանի համայնքապետարանի ՔԿԱԳ առանձնացված ստորաբաժանմանը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Գ. ԲԱԲՈՒՋՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Վ. ԷԼԲԱԿՅԱՆ

Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լ. ՂԱՋԱՐՅԱՆ

Հ. ՄԱԹՈՍՅԱՆ

Մ.ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

14 հոկտեմբեր 2021թվական
գյուղ Ախուրյան